

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

A 13.00.01
A Q-15

Արվյան Ռոստոմ Սուրենի

Ավագ դպրոցականների ինքնակառավարման ունակությունների
զարգացումը մանկավարժական գործընթացում

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Սեղմագիր

ԵՐԵՎԱՆ 2006

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱԿԱՐ - մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱՒՈՍՆԵՐ - մանկավարժական գիտությունների դոկտոր Ա.Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
մանկավարժական գիտությունների թեկնածու Հ.Ա. ԲԱԲԱՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ - Գյումրիի Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2006թ. հունիսի 15-ին ժամը 14⁰⁰-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 375010, ք. Երևան Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2006թ. մայիսի 15-ին:

020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

հոգեբանական գիտ. թեկնածու *Աննա Ա.Ս. ՀՈՎԱՆՆԻՍՅԱՆ*



2440-2006

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հետազոտության հրատապությունը: Հասարակության անցման արդի փուլը պահանջում է ուսուցման, դաստիարակության բովանդակության, մեթոդների և դրանց կառավարման ձևերի փոփոխությունների, որոնք համապատասխանում են կյանքի ժամանակից պահանջներին:

Բարեփոխվող սոցիալ-մշակութային և հասարակական իրավիճակը ենթադրում է կրթության նոր ռազմավարություն, որի գլխավոր խնդիրը կրթությունը ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելն է: Այդ են վկայում ՀՀ կրթական համակարգում ընթացող բարեփոխումները, նոր կրթակարգի մշակումը և նրա բուռն քննարկումները կրթական հաստատություններում:

Մանկավարժական գործունեության արդյունավետությունը պետք է գնահատվի դպրոցականների ինքնուրույն գործելու և անընդհատ փոփոխվող պայմաններում որոշում կայացնելու պատրաստվածությամբ: Այս առումով մանկավարժական գիտությունը մշտապես անդրադարձել է ուսուցման գործընթացում աշակերտի դիրքորոշման և նրա ուսուցման ղեկավարման հարցերի ուսումնասիրմանը:

Անցյալում մանկավարժական միտքը հիմնավորել է մանկավարժական գործընթացում ուսուցչի ղեկավար դերը: Խորհրդային մանկավարժության մեջ մշակվել է մանկավարժական ղեկավարման նպատակը, սահմանվել են ուսուցման հիմնական սկզբունքները, բովանդակությունը, մեթոդները որպես կառավարման միջոցներ:

Հոգեբանների կողմից մանկավարժական գործընթացում դպրոցականի գործունեության հետազոտումը թույլ տվեց գտնել նրա ակտիվության և ինքնուրույնության, ինչպես նաև նրա ուսման կառավարման համապատասխան միջոցները՝ այնպիսիներ, ինչպիսիք են ուսումնաձանաչողական հետաքրքրության, դրդապատճառային ոլորտի, սեփական գործունեության ռեֆլեքսիայի ուժեղացման և այլն: 1960-70-ական թվականներից մանկավարժական ղեկավարման և ուսուցման կառավարման առաջնային հիմք է հանդիսանում գործունեության տեսությունը (Լ.Ս. Վիգոտսկի, Ա.Ն. Լեոնտև, Վ.Վ. Դավիդով): Ըստ դրա ուսումնական գործընթացը դիտարկվում է որպես դպրոցականի գործունեության հիմք; իսկ ուսուցչի խնդիրը դրա ձևավորման կառավարումն է: Շատ գիտնականների կողմից ժամանակակից աշակերտը մանկավարժական գործընթացում դիտարկվում է որպես գործունեության սուբյեկտ: Վերջին տարիների առաջ քաշած անձնակողմնորոշիչ ուսուցման հայեցակարգը ուղղված է աշակերտի սուբյեկտային դիրքորոշման իրացմանը, որը սկզբունքորեն նորովի է դնում ուսուցչի և աշակերտի փոխհարաբերության հարցը:

Աշակերտի կողմից մանկավարժական գործընթացում ունեցած իր դերի գիտակցումը հնարավոր է դարձնում նրան կառավարչական գործառույթների աստիճանական փոխանցումը, որը վերջին հաշվով բերում է աշակերտի կողմից իր ուսման կառավարմանը, իսկ ուսուցչի խնդիրը դառնում է սովորողների ինքնավարության, ինքնակառավարման պայմանների բացահայտումը:

Մանկավարժական գործընթացում դպրոցականների ինքնավարության և

ինքնակառավարման հիմնախնդրի հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ անցյալի մանկավարժության տեսության և պրակտիկայի մեջ դպրոցականների ինքնակառավարումը դիտարկվել է միայն նրանց արտաուսումնական գործունեության տեսանկյունով: Այդ հանգամանքի գիտակցումը թելադրում է հետազոտողներին (Բ. Ս. Ավետիսյան, Ի. Ֆ. Գրուզև) ուսումնասիրել սովորողների ինքնակառավարումը, հաշվի առնելով ժամանակակից մանկավարժության տեսության և պրակտիկայի պայմաններն ու պահանջները: Վերոհիշյալ հետազոտողների կողմից փորձեր են արվում հիմնավորել և ներկայացնել աշակերտական ինքնակառավարման գաղափարները մանկավարժական գործընթացում:

4. Ն. Ռաչուպիհինի, Լ. Մ. Ֆրիդմանի, Ս. Դ. Շևչենկոյի կողմից դպրոցականների ինքնակառավարումը դիտարկվում է որպես ուսուցման գործընթացի կազմակերպման միջոց, որտեղ որպես սուբյեկտ հանդես է գալիս աշակերտական կոլեկտիվը:

Վերջերս մանկավարժական գիտության և պրակտիկայի մեջ զգալիորեն աճել է հետաքրքրությունը կառավարման խնդիրների նկատմամբ, սակայն այն առաջին հերթին կապվում է կրթության, ուսումնական հաստատություններում նորամուծությունների կառավարման, ինչպես նաև ուսուցչի կառավարչական գործունեության հետ: Դրա հետ միասին մի շարք հետազոտությունների առարկա է դարձել ինքնակառավարման առանձին կարողությունների ձևավորումը (Ն. Դ. Կոչուգուրովա, Վ. Ս. Մալցևա, Գ. Ն. Շիրանովա):

Հայ գիտնականները նույնպես վերջին շրջանում մեծ հետաքրքրություն են ցուցաբերում աշակերտի՝ որպես կրթական գործընթացի սուբյեկտի բացահայտման, ինքնակառավարման, ինքնադեկլարման խնդիրների նկատմամբ (Մ. Ս. Մանուկյան, Ս. Պ. Մանուկյան, Ս. Ս. Խրիմյան, Ս. Տ. Վարդումյան և այլոք):

Ուսուցման գործընթացի կառավարման հիմնախնդրին վերաբերող գրականության և ատենախոսությունների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դպրոցականների ինքնակառավարումը մանկավարժական գործընթացում դեռևս չի դարձել ամբողջական հետազոտության առարկա:

Չի մշակված «ուսման գործընթացի կառավարումը դպրոցականների կողմից» հասկացությունը, չի որոշվել նրա էությունը, բովանդակությունը, կարողությունների լրիվ կազմը, ինչպես նաև լիարժեքորեն չի մշակվել ուսուցչի գործունեության օբյեկտից աշակերտին ուսման կառավարման սուբյեկտի դիրքի փոխանցելու միջոցները:

Սույն հետազոտության մեջ փորձ է արվել ուսուցման գործընթացը դիտարկել իր՝ աշակերտի կողմից կառավարվելու տեսանկյունից, ցույց տալ մանկավարժական գործընթացում աշակերտի՝ որպես կառավարման սուբյեկտի ձևավորումը, բացահայտել դպրոցականների ինքնակառավարման էությունը (ինքնակառավարման գործառույթները, կառուցվածքը, կազմը, կարողությունների բովանդակությունը և նրանց յուրացման մակարդակները), ինքնակառավարման զարգացման մանկավարժական պայմանները, ուսուցչի գործունեությունը՝ ուղղված սովորողների մոտ ինքնակառավարման կարողությունների ձևավորմանը:

Հետազոտության օբյեկտը դպրոցականների կողմից ուսման գործընթացի

կառավարումն է:

Հետազոտության առարկան մանկավարժական գործընթացում դպրոցականի ինքնակառավարման ունակությունների զարգացման պայմանների ստեղծմանը նպատակաուղղված ուսուցչի գործունեությունն է:

Հետազոտության գիտական վարկածը. Ուսուցման գործընթացի ինքնակառավարումն ավագ դպրոցականի կողմից արդյունավետորեն կզարգանա, եթե

1. անձնակողմնորոշիչ ուսուցման պայմաններում ուսուցիչը կազմակերպի կրթական գործընթացի մասնակիցների սուբյեկտ-սուբյեկտային փոխգործակցությունը,

2. ապահովի սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունների կատարելագործումը,

3. իրականացնի սովորողների մոտ ինքնակառավարման կարողությունների նպատակաուղղված զարգացում:

Մեթոդաբանական հիմքը կազմում են՝ իմացության տեսությունը, ինքնակառավարման ուսուցման անցյալի առաջավոր ու դրական փորձը, մանկավարժության, հոգեբանության, փիլիսոփայության և տրամաբանության բնագավառներում ձեռք բերված նվաճումները՝ կապված ուսուցման գործընթացում վերակառուցման, նորացման ու զարգացման հետ:

Հետազոտության նպատակն է մշակել ուսուցման գործընթացում դպրոցականների ինքնակառավարման ունակությունների զարգացման հայեցակարգային հիմունքները և հիմնավորել մանկավարժական գործընթացում նրանց զարգացման մանկավարժական պայմանները:

Հետազոտության հիմնական խնդիրներն են:

1. Տալ ինքնակառավարման և այն կազմող բաղկացուցիչ մասերի ուսուցման և գործնական կիրառության եղանակների ու միջոցների մանրամասն նկարագիրը:

2. Վերլուծել ուսուցման գործընթացի սոցիալ-հոգեբանական և մանկավարժական բնույթը՝ աշակերտական կառավարման հնարավորությունների պրակտիկայի իրացման տեսանկյունից:

3. Բացահայտել ուսուցման գործընթացում ավագ դպրոցականների ինքնակառավարման էությունը:

4. Հիմնավորել այն մանկավարժական պայմանները, որոնք ապահովում են ուսման գործընթացում դպրոցականների ինքնակառավարման զարգացումը:

5. Մշակել կրթական գործընթացում դպրոցականների ինքնակառավարման ունակությունների ձևավորման մեթոդիկան:

6. Ընդհանրացնել Երևան քաղաքի տարբեր դպրոցների առաջավոր ուսուցիչների և մեր հետազոտության դրական փորձը:

Հետազոտության մեթոդները: Առաջադրված գիտական վարկածով ատենախոսության մեջ կիրառել ենք տեսական և գործնական մեթոդներ: Առաջնորդվել ենք մանկավարժական գիտությանը բնորոշ գրույցի, անկետավորման, հետազոտության մաթեմատիկական վիճակագրական մշակման և փորձարարական գնահատման, ինչպես նաև համապարփակ պատմահամեմատական մեթոդներով: Հաշվի ենք առել նաև արձանագրող և

ձևավորող գիտափորձերը: Վարկածը փորձարկելու, բացահայտելու համար:

Հետազոտության գիտական նորույթը: Անցյալի և ժամանակակից մանկավարժական գրականության, ինչպես նաև հոգեբանական և փիլիսոփայական ուսումնասիրությունների, աշխատությունների տվյալների, հանրապետության դպրոցների առաջավոր ուսուցիչների կատարած փորձի հիման վրա ուսումնասիրել ենք ավագ դպրոցականների ինքնակառավարման ունակությունների զարգացման հարցը՝ թե՛ տեսական, և թե՛ գործնական առումով և առաջարկել ամբողջական համակարգ: Օգտագործել ենք ավագ դպրոցականների ինքնակառավարման զարգացման տեսական և մեթոդական հիմունքների վերաբերյալ վերջին տարիներում կատարված ուսումնասիրությունները, մասնավորապես Ս.Պ. Մանուկյանի, Մ.Մ. Մանուկյանի աշխատությունները: Օգտվել ենք նաև ռուսալեզու գրականությունից, մասնավորապես Վ. Վ. Դավիդովի, Ա. Վ. Ջապրոթեցի, Ն. Ա. Մելինսկայայի, Յու. Կ. Բաբանսկու, Ե. Ի. Իսաևի, Վ. Կ. Դյամենկոյի, Գ. Ի. Շուկինայի աշխատություններից, ինչպես նաև հոգեբանության և փիլիսոփայության բնագավառներում կատարված այն հետազոտություններից, որոնք հնարավորություն են տվել տեսական և գործնական որոշ հարցեր մեկնաբանել նորովի:

1. Աշխատանքում ներկայացված է ուսումնառության գործընթացի բնույթի սոցիալ-հոգեբանական և մանկավարժական վերլուծություն՝ աշակերտական ինքնակառավարման նոր փորձի և ընկալումների տեսակետից:

2. Մշակված են ավագ դպրոցականների կողմից ուսման գործընթացի ինքնակառավարման հայեցակարգային հիմունքները:

3. Բացահայտված են այն մանկավարժական պայմանները, որոնք ապահովում են ուսման գործընթացի կառավարման զարգացումը, նաև որոշվել են այն ուղիներն ու մեթոդները, որոնք ուսուցման ժամանակ կարող են դառնալ ավագ դպրոցականների ինքնակառավարման ունակությունների ձևավորման միջոց:

Տեսական նշանակությունը: Աշխատանքում տրված տեսական եզրակացությունները արդիական են կրթական գործընթացում ուսուցչի և աշակերտի փոխգործակցության ասպարեզում: Մեր հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել միջնակարգ դպրոցի ավագ դասարաններում դասավանդող ուսուցիչներին, մանկավարժության հարցերով զբաղվող մասնագետներին, ուսումնական դասագրքերի հեղինակներին, ինչպես նաև մանկավարժությունն ուսումնասիրող ուսանողներին:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ առկա մի շարք մանկավարժական կոնկրետ փորձի փաստումները օժտված են գործնական նշանակությամբ: Աշխատանքի ընթացքում ձևավորված ինքնակառավարման ունակությունների մշակված մեթոդիկական կարող է կիրառվել մանկավարժական գործընթացում: Ավագ դասարաններում ինքնակառավարման ունակությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների ամբողջական համակարգի ստեղծումը կօգնի այդ դասարաններում պարապող ուսուցիչներին իրենց աշխատանքներն կազմակերպել այնպես, որպեսզի այն նպաստի աշակերտներին ինքնակառավարման վերաբերյալ գիտելքների, կարողությունների ու հմտությունների հաղորդմանը, մշակմանն ու զարգացմանը:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունն իրականացվել է Ս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնում:

Հետազոտության ներդրումը: Ատենախոսության թեմայով հրատարակվել են չորս գիտական հոդվածներ: Հետազոտության արդյունքները ներդրվել են Երևան քաղաքի թիվ 29, 43, 63 միջնակարգ դպրոցների ավագ դասարաններում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները:

1. Ուսուցման գործընթացը դպրոցականների անձնային և սոցիալապես նշանակալի գործունեությունն է, որն էլ դառնում է նրանց ինքնակառավարման նախապայմանն ու հիմքը:

2. Դպրոցականների կողմից ուսման ինքնակառավարումը մանկավարժական նոր չափանիշների և մեթոդների ենթահամակարգ է: Մանկավարժական գործընթացում ինքնակառավարումն իրենից ներկայացնում է ռեֆլեքսիվ գործունեություն, որն ունի նպատակ, միջոցներ և արդյունք:

3. Ինքնակառավարման զարգացումն արդյունավետ է անձնակողմնորոշված ուսուցման պայմաններում, երբ ուսուցիչը կազմակերպում է սուբյեկտ-սուբյեկտային փոխգործակցությունը և կատարելագործում է սուբյեկտ-օբյեկտ հարաբերակցությունները, որի արդյունքում նպատակաուղղված են զարգանում դպրոցականների ինքնակառավարման ունակությունները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսության ընդհանուր ծավալը 145 էջ է, այն բաղկացած է ներածությունից, 2 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը: «Ներածություն» մեջ առաջադրել ենք աշխատանքի բուն թեմային ավագ դպրոցականների ինքնակառավարման ունակությունների զարգացմանն առնչվող հարցեր և ներկայացնել դրանց տեղն ու դերը մանկավարժական գործընթացում, նաև ուսումնասիրել ենք մանկավարժության տեսությանն ու պատմությանն այլ դրույթներ: Աշխատել ենք պահպանել այդ հարցերի, դրույթների նպատակաուղղվածությունը և հաջորդականությունը: Հետազոտելով ավագ դպրոցականների ուսուցման ժամանակ գործադրվող առաջավոր և ժամանակակից մեթոդներն ու մեթոդական հնարների նշանակությունը աշակերտների մտածողության զարգացման հարցում հիմնավորել ենք թեմայի ընտրությունն ու արդիականությունը, նշել ենք հետազոտության օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքը, նպատակը, խնդիրները, մեթոդները, ներկայացրել ենք գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ներդրումը:

Ատենախոսության 1-ին գլուխը կրում է «Ուսուցման գործընթացում ավագ դպրոցականների ինքնակառավարման հայեցակարգային հիմունքները» վերնագիրը, որն իր հերթին տրոհվել է երեք ենթագլխի:

1.1 Ուսման գործընթացը որպես աշակերտի կառավարման օբյեկտ: Այս

ենթազվխում աշխատանքի ջուն թեմայի տեսանկյունից դիտարկվում և վերլուծվում են մի շարք էական և սկզբունքային մանկավարժական, հոգեբանական, փիլիսոփայական, հասարակագիտական չափանիշներ, գիտական օրինաչափություններ և սահմանումներ: Ուստի մենք կարևորել ենք նախ և առաջ ոչ միայն աշակերտի կամ ուսուցչի, այլև համապարփակ մարդկային գործունեությունը հիմնված հասարակական-պատմական բնույթ ունեցող մարդկային կենսափորձի, դիպեկտիկական ըմբռումների վրա: Դրա հետ մեկտեղ ատենախոսության այս գլխում պատմաքննական համեմատական ակնարկի ձևով տրվում է ավագ դպրոցականների ինքնակառավարման հարցերի և ուսուցման գործընթացում աշակերտների տրամաբանական մտածողության զարգացման ուղղությամբ մինչ այժմ կատարված աշխատանքների (տեսական և գործնական) հակիրճ քննական վերլուծությունը:

Այդ ամենը դարձել են գիտական-մեթոդաբանական ելակետեր ժամանակակից դիտանկյունից, նոր ժամանակների չափանիշներին համապատասխան և առավել ամբողջական դիտարկելու հետազոտության թեման: Մինևույն ժամանակ մանկավարժական նոր խնդիրները քննվում և դիտարկվում են այդ գիտության ավանդական ձեռքբերումներից և առկա չափանիշներից, տեսական հիմնավորումներից, սահմանումներից ելնելով: 21-րդ դարի մանկավարժական գիտությունը առավել հակված է ուսուցման գործընթացում դպրոցականների և ուսանողների ինքնակառավարման առավել ազատության և այլ առաջադեմ սկզբունքների տեսական և պրակտիկ գործարկումներին: Աշխատության բուն թեման նպատակառոչված է հենց այս հասունացած և արդիական մանկավարժական խնդիրների հանգամանալից մեկնությանը: Ընդ որում դրանք հետազոտվում են մանկավարժությանը հարակից այլ գիտությունների հետ ունեցած (հոգեբանություն, փիլիսոփայություն) հիմնական առնչությունների և ինտեգրումների դաշտում: Աշակերտի կողմից մանկավարժական գործընթացում ունեցած իր դերի գիտակցումը հնարավոր է դարձնում նրա մեջ զարգացնել ինքնակառավարման ունակություններ, որի արդյունքում ուսուցչի խնդիրը դառնում է սովորողների ինքնավարության և ինքնակառավարման ունակությունների բացահայտումը և կառավարչական ֆունկցիաների փոխանցումը ավագ դպրոցականներին:

Այստեղ ներկայացված են մանկավարժական գիտության հայ, ռուս և արտասահմանյան նշանավոր տեսաբանների և մեթոդիստ-մանկավարժների տեսակետները ինքնակառավարման երևույթի շուրջ, մասնավորապես՝ ավագ դպրոցականների ինքնակառավարման վերաբերյալ ընդհանուր գիտելիքի և աշակերտների կողմից դրա կիրառման հմտությունների ձևավորման մասին: Առաջադրված են այն ուղիները, որոնք հնարավորություն են ընձեռում զարգացնելու աշակերտների ինքնակառավարման ունակությունները, ստեղծագործական կարողությունները և տրամաբանական մտածողությունը, նպաստում ինքնակառավարման հատկանիշներն ու օրինաչափությունները ճանաչելու: Աշխատանքում բերված են նրանց արժեքավոր մտքերից՝ կապված մեթոդական և տեսական մանկավարժական այն հնարների գործադրման հետ, որոնք նպաստում են ուսումնական պրոցեսի ճիշտ կազմակերպման և նրանում աշակերտների ներգրավմանը:

Մանկավարժական գիտության տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում ուսուցման գործունային մոտեցման գաղափարները: Մարդկային գործունեության վերաբերյալ վերոհիշյալ գաղափարները կազմում են Լ. Ա. Վիգոտսկու «Մարդու հոգեկանի հասարակական-պատմական ծագման մասին» ուսմունքի հիմքը, ըստ որի մարդու անհատական, հոգեբանական առանձնահատկություններն առկա են սոցիալական ձևով՝ արտաքուստ և միայն գործունեության ընթացքում են բացահայտվում անհատի կողմից: Նույն ուսմունքի կատարյալ և տրամաբանական շարունակությունը դարձավ Ս. Լ. Ռուբինշտեյնի գործունեության փիլիսոփայական հոգեբանական տեսությունը՝ գիտակցության և գործունեության միասնության սկզբունքի ձևակերպումը: Մարդու գործունեության առանձնահատկությունը գիտակցված և նպատակամղված լինելն է, որի շնորհիվ մարդը կարգավորում է իր նպատակները, սեփական գաղափարներն ու մտահղացումները՝ առարկայացնելով իրականության մեջ: Այս ամենի շնորհիվ գործուն կապ է ստեղծվում մարդու և աշխարհի միջև, կեցությունը վերածվում է օբյեկտի և սուբյեկտի միասնության, նաև՝ ներդաշնության: Ելնելով վերոհիշյալ փիլիսոփայական և ընդհանուր հոգեբանական դիրքորոշումներից՝ մենք այս ենթազվխում կարևորել ենք «ուսում», «ուսումնական գործունեություն», «ճանաչողական գործունեություն», «ուսումնաճանաչողական գործունեություն» հասկացություններն ուսումնական գործընթացի մեջ: Այս ամենը սերտորեն առնչվում է ուսուցման գաղափարին, որի պարագայում տարբերակվում են «ուսումնական» և «ճանաչողական» գործունեության եղանակների հակասությունները և տարբերությունները: Ուսումնական գործունեությունն ըստ էության կապված է արտաքին գործողությունների՝ պատմության, ընթերցանության, արտագրության, իսկ ճանաչողականը՝ վերլուծման, համադրման, ընդհանրացման և այլնի հետ:

Դիտարկվող հայեցակարգի շրջանակներում ուսուցման նպատակներից բխող ցանկացած գործունեություն գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման, ձեռք բերման գործընթացն է: Այդ տեսանկյունից մենք կարևորել ենք հատկապես Յու. Կ. Բաբանսկու կողմից բացահայտած գործողությունների կազմը, որոնք համպատասխան ուսումնաճանաչողական գործունեության պայմաններում դպրոցականները կարողանում են իրականացնել ինքնուրույնաբար: Նրան է պատկանում այն հետևությունը, որ իր գործունեությունը աշակերտը կարող է իմաստավորել ուսումնաճանաչողական գործունեության յուրաքանչյուր փուլում: Այդ փուլերից են

1. գործունեության նպատակի, խնդիրների գիտակցումն աշակերտի կողմից,
2. պահանջումներ, դրդապատճառների զարգացում և խորացում,
3. ուսումնական նյութի ընկալում, իմաստավորում, կրկնություն,

ինքնավերահսկողություն, ինքնազննատու:

Ուսումնական գործունեության տեսության շրջանակներում բացահայտված ու նկարագրված են ավագ դպրոցականների ինքնակառավարման ունակությունների զարգացման այս փուլերը, մանկավարժական պայմանները՝ հաշվի առնելով աշակերտների հոգեբանական, անհատական առանձնահատկությունները:

Ավանդական ուսուցման ժամանակ աշակերտի գործունեության առարկայի աստիճանական ընդլայնումը, խնդիրների բարդացումը հանգեցնում է ուսուցչի

ղեկավար դերի ուժեղացումը: Նպատակադրված ուսուցման գործընթացում կարևորը ոչ միայն ուսուցման կազմակերպումն է, պրոբլեմի լուծումը, այլև այն պայմանները (մոտիվացիան), որոնք դրական վերաբերմունք են առաջացնում աշակերտների մեջ: Այսպիսով ուսուցիչը պետք է այնպես կազմակերպի ուսուցման գործընթացը, որ աշակերտների մեջ հաճախ առաջանան պրոբլեմներ (հիմնահարցեր) և նրանց մղի դրանք ինքնուրույնաբար լուծելու և ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերելու: Դժվար չէ եզրակացնել, որ ավագ դպրոցականների ակտիվությունն ու ստեղծագործական մտածողությունը այս միջոցով զարգացնելը նպաստում է նրանց մոտ ինքնակառավարման ունակությունների ձևավորմանը: Այս դեպքում գիտելիքները չեն կարող լինել մակերեսային կամ ձևական, քանի որ դրանք յուրացվում են սեփական դրդապատճառներից, նպատակներից ելնելով:

Տարբեր գիտնականներ և տեսաբաններ Վ. Ի. Տրետյակովան, Վ. Ի. Բեսպալկոն և ուրիշներ առաջադրել են ուսման գործընթացի կամ դիդակտիկական գործընթացի որպես աշակերտի գործունեության կառուցվածքի բաղադրիչները, տարրերը, որը հակիրճ անվանվում է «սովորողի գործունեության ալգորիթմ»: Այդ ալգորիթմներում կարևորվում են հետևյալ մասերը՝ դրդապատճառային, բովանդակային-գործառնական, գնահատման և արժեքա-կամային: Այս ամենի հետևանքով և նպատակային գործադրման ընթացքում աշակերտը անձնական փորձ է ձեռք բերում, աճում է նրա ինքնուրույնությունը, զարգանում է մտածողությունը:

1.2 «Դպրոցականների կողմից, ուսուցման գործընթացի կառավարման էությունը» մեր աշխատանքի հաջորդ ենթագլուխն է: Կառավարման երևույթը հատուկ ուսումնասիրության առարկա դարձավ համեմատաբար վերջերս՝ 20-րդ դարի 2-րդ կեսին, փիլիսոփայության, ժամանակակից մանկավարժության և այլ գիտությունների կողմից: Այս դիտանկյունից մեզ հետաքրքրողը կառավարման, ինչպես նաև աշակերտական ինքնակառավարման և դրանցից ծագող մանկավարժական հարցերը, երևույթներն են: Կառավարումը մանկավարժական գործընթացում հանդես է գալիս որպես սովորողին ներկայացվող առաջադրանքների այնպիսի համակարգ, որը նախատեսում է դպրոցականների աստիճանական զարգացումը ճանաչողության վերընթաց գործընթացում: Յ. Գյոթեն այս հասկացության սահմանումը տվել է հստակ ձևով, որ լավագույն կառավարումն այն է, որը սովորեցնում է ինքնակառավարում: Մանկավարժության մեջ ինքնակառավարման որպես մանկավարժական երևույթի ամբողջական ուսումնասիրումը նոր է սկսվում: Ավանդաբար այս հասկացությունները կապվում էին միայն աշակերտի արտաուսումնական գործունեության հետ: Մանկավարժական գիտության մեջ այս հիմնախնդիրով զբաղվել են նշանավոր մանկավարժներ Ն. Կրուպսկայային, Վ. Ա. Սուխոմլինսկուն, Ա. Ա. Մակարենկոյին, Լ. Ի. Ումանսկուն և այլոց:

Արդի մանկավարժության մեջ կան տարբեր մոտեցումներ ուսումնական գործընթացի կառավարման կատարելագործման նկատմամբ: Մեծապես տարածված են դրդապատճառային օրինաչափություններից բխող կառավարման գաղափարները, որի էությունը հետևյալն է. աշակերտը պետք է սովորի, իսկ ուսուցիչը իրականացնի դրդապատճառային կառավարումը, որն է՝ կազմակերպի,

հիմնավորի, վերահսկի, խորհուրդ տա և այլն:

Ուսումնական գործընթացում դպրոցականների ինքնակառավարման, ինքնավարության հիմնախնդիրների լուծումը հնարավոր է միջառարկայական մոտեցման հիման վրա, որը ներառում է կիբեռնետիկայի և սինեթետիկայի կառավարման գաղափարները, արևմտյան մենեջմենթի փորձը: Կառավարման նկատմամբ այս մոտեցման մեջ էական է կառավարչական գործունեության մեթոդիկաների, կանոնների, ալգորիթմների տեսքով նկարագրելու հնարավորությունը:

Ժամանակակից կրթական գործընթացն ըմբռնվում է որպես բարդ երևույթ, որը ներառում է «սոցիալական» (նպատակներ, բովանդակություն), հոգեբանական (դրդապատճառներ, կամք, հույզեր, մտածողություն և այլն), կիբեռնետիկական (պլանավորում, կազմակերպում, կարգավորում, վերահսկողություն) կողմեր, որոնք ոչ թե պարզապես գումարվում են, այլ որակապես նորոպի համադրվում: Նույն գործընթացում կառավարման և ինքնակառավարման մեթոդաբանական հիմքը դառնում է ինտեգրատիվ մոտեցումը: Այս դեպքում ինքնակառավարումը և ինքնակարգավորումը ոչ թե երկու տարբեր գործընթացներ են, այլ անձի ակտիվության երկու կողմեր՝ փոփոխականի ու կայունի դիալեկտիկական միասնություն մարդու անընդհատ զարգացման գործընթացում: Սա կառավարող ենթահամակարգի (ուսուցիչ, աշակերտ) և կառավարվողի (ուսման) փոխգործակցության եղանակն է բաց, ինքնազարգացող սոցիալական համակարգում մանկավարժական գործընթացում: Ինքնակարգավորումը ապահովում է համակարգի գործունեությունը, իսկ ինքնակառավարումը վերջինիս զարգացումը: Ինքնակարգավորումը կատարում է առաջնային, ինքնակարգությունը՝ երկրորդային դերը:

Մանկավարժական գործընթացում կառավարման օբյեկտը ներկայացված է երկու ձևերով՝ ուսումնառարկայական ու սոցիալական: Հետևաբար, այդ գործընթացում ուսուցչի և աշակերտի համատեղ կառավարչական գործունեության առարկա են հանդես գալիս դրդապատճառը (շարժառիթը), գործունեության նպատակը, ուսումնական նյութի բովանդակությունը, ուսուցման կազմակերպման մեթոդներն ու ձևերը, ինչպես նաև ուսումնական գործունեության արդյունքը: Առանձնացված կառավարման գործառույթների՝ որպես գործունեության տեսակների մեջ այդ կազմի համակարգը ձևավորող գործունը կլինի նպատակը:

Դրդապատճառների և նպատակների ազդեցությամբ ձևավորվում է ցանկացած մանկավարժական համակարգի կառավարման գործընթացի տեղեկատվական-վերլուծական հիմքը: Դրդապատճառային դրույթը հիմք է ծառայում գործունեության կանխատեսման ու պլանավորման համար, սահմանում կազմակերպական ձևերը, ներգործության միջոցներն ընդունված որոշումների կատարման համար, ծառայում որպես չափանիշ դիագնոստիկ փաստական արդյունքների վերահսկողության ու գնահատման համար:

Աշակերտի անցումն ինքնակառավարման ռեժիմի ամենից առաջ դիդակտիկական հիմնախնդիր է և ենթադրում է ինքնակառավարման գործառույթներին համապատասխանող կարողությունների ասկայություն, որոնք են

1. ինքնակառավարում
2. ինքնավերլուծության և ինքնանպատակադրում
3. ինքնականխատեսում
4. ինքնակազմակերպում
5. ինքնավերահսկողություն, ինքնագնահատում
6. ինքնաշտկում:

Մանկավարժական գործընթացում այս գործառույթներն ունեն իրենց առանձնահատկությունները, նպատակի առաջադրման, որոշման ընդունման, արդյունքի գնահատման ժամանակ: Կարևորվում է նորմատիվ-արժեքային մոդելավորումը, որը նշանակում է, որ այդ գործառույթների իրականացումը պայմանավորված է արտաքին պահանջներով՝ ուսումնական ծրագրի բովանդակությամբ, ուսման և նաև առանձին դասի սահմանափակ ժամկետներով:

1.3 «Ուսուցչի գործունեությունը ուսուցման գործընթացում դպրոցականի ինքնակառավարման պայմանների ստեղծման ուղղությամբ»: Մանկավարժական գործընթացում ուսուցչի և աշակերտի գործունեության դիալեկտիկական փոխադարձ կապը ապացույցների կարիք չունի: Մենք փորձել ենք ուսուցման ողջ գործընթացը ներկայացնել ամբողջական տեսքով. առաջադրվել են այն մեթոդներն ու մեթոդական հնարները, որոնց գործադրմամբ ուսուցիչը կարող է հաղորդել ինքնակառավարման վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և աշակերտների մեջ մշակել դրանց տարբերակման և կիրառման ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարողություններ և հմտություններ: Ուսուցման գործընթացում ուսուցչի խնդիրը աշակերտի ինքնակառավարման զարգացման համար պայմանների ստեղծումն է: Տվյալ դեպքում առաջնային պայման է աշակերտի վերաբերմունքը շրջապատող երևույթների նկատմամբ, այն միջավայրը, իրավիճակը որտեղ նա կայանում է ու զարգանում: Մեր կարծիքով, ուսուցումը կառավարելու ուղղությամբ ուսուցչի գործունեության ալգորիթմը կարելի է չափանշել 4-5 քայլերով, որոնց ընթացքում սուբյեկտ-սուբյեկտային հիմքի վրա կազմակերպվում է ուսուցման գործընթացը: Նրանում հիմնականում կարևորվում են ուսուցչի կողմից ձեռնարկվող քայլերն՝ ավագ դպրոցականների մոտ ինքնակառավարման կարողություններ ձևավորելու համար:

Դպրոցականների ինքնակառավարման ունակությունների զարգացման տեսական հայեցակարգային հիմունքները և մշակվող չափանիշներն վկայում են ուսուցման գործընթացում ինքնակառավարման երևույթի սերտ առընչությունը պրոբլեմային ուսուցման մեթոդիկային: Այս մեթոդիկային անդրադարձել են մի շարք մանկավարժ գիտնականներ, որոնք առաջադրեցին մի շարք տեսական խնդիրներ՝ կապված դպրոցականի ներքին ճանաչողական պաշարների ակտիվացման միջոցների, ուսուցման գործընթացի կատարելագործման, աշակերտի գործունեության կառուցվածքի և բովանդակության, մտավոր գործողությունների ձևավորման օրինաչափությունների և դպրոցականների մոտ ճանաչողական գործունեության եղանակների որոնման և բացահայտման հետ: Այս հարցերի տեսանկյունից մշակվել են «Ուսուցման գործընթացի ակտիվացման տեսությունը» (Մ. Ա. Դանիլով, Մ. Ն. Սկատկին), «Բովանդակային ընդհանրացման տեսությունը», «Պրոբլեմային ուսուցման տեսությունը» և «Ճանաչողական հետաքրքրության տեսություն»:

Ըստ էության այս բոլոր տեսությունները և հատկապես ուսուցման գործընթացի «գործունային մոտեցման տեսությունը» և «պրոբլեմային ուսուցման տեսությունը» ընդհանրական են շատ կողմերով և բացահայտում են ինքնակառավարման երևույթի էությունը մանկավարժական գործընթացի տեսանկյունից: Դասի ժամանակ իրականացնելով պրոբլեմային ուսուցում ուսուցիչն ակտիվացնում է մտածողական գործընթացները, ինչի արդյունքում յուրացվում են մտածողության ձևերն ու եղանակները: Ըստ այդ տեսությունների ուսուցման գործընթացի շարժիչ ուժն ուսուցման ընթացքում առաջացած խնդիրների և աշակերտների մոտ գիտելիքների ու կարողությունների առկայության ներքին հակասությունն է, ուստի մանկավարժությունը որոնում է դպրոցականի ներքին ճանաչողական պաշարների ակտիվացման աղբյուրներ, ուսուցման գործընթացի կատարելագործման ուղիներ:

Ստենդախտության երկրորդ գլուխը կրում է «Ուսուցման գործընթացում ավագ դպրոցականների ինքնակառավարման փորձնական-փորձարարական աշխատանքները» վերնագիրը: Այն նույնպես տրոհված է 3 մասնազուխների:

2.1 Առաջին մասնազուխը «Ավագ դպրոցականների ինքնակառավարման միջոցները ուսման գործընթացում», որում անդրադարձել ենք մեր մի շարք փորձնական-փորձարարական աշխատանքներին: Դա պայմանավորված է կրթության համակարգի և դպրոցի ժողովրդավարացմամբ, ուսման նոր մեթոդներով, պահանջներով և մեթոդական առաջարկներով: Կրթության համակարգի և դպրոցի ժողովրդավարացումը հանգեցրին կրթական բարեփոխումներին, ինչպես ողջ կրթական համակարգում, այնպես էլ ուսումնական ծրագրերում և պլաններում: Փոփոխվեց կրթական բովանդակությունը, նորացվեցին ուսուցման մեթոդները, որոնք և հանգեցրին մանկավարժական նոր իրավիճակների առաջացմանը: Դպրոցներն ապակենտրոնացվում են աստիճանաբար ստանալով մեծ ինքնուրույնություն, որը նպաստում է նաև աշակերտական կոլեկտիվների ինքնակառավարման նոր գործառույթների ձևավորմանը:

Ուսուցման գործընթացում փորձարարական աշխատանքի կազմակերպումն ավագ դպրոցականների ինքնակառավարման զարգացման ուղղությամբ մեր հետազոտության հիմնական խնդիրներից է, որի տեսական վերլուծությունը և մանկավարժական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ տվեցին ձևակերպել փորձարարական աշխատանքի նպատակները:

1. Բացահայտել ինքնակառավարման ունակությունների ձևավորման դինամիկական առանձնահատուկ մանկավարժական պայմանների և սովորական աշխատակարգի ստեղծման ժամանակ:

2. Չափել ինքնակառավարման ունակությունների յուրացման որակը, նրանց նպատակաուղղված ձևավորման և սովորական ուսուցման պայմաններում:

3. Գնահատել փորձի արդյունքները հարաբերական ցուցանիշներով, որոնք ունեն թվական բնութագրեր:

Վերոհիշյալ նպատակները որոշել են փորձարարական բազայի ընտրությունը: Միևնույն ժամանակ մենք հաշվի ենք առել նաև ուսուցման գործընթացում ավագ դպրոցականների ինքնակառավարման համապատասխան մանկավարժական պայմանների առկայության անհրաժեշտությունը: Փորձարարական աշխատանքը

կազմակերպվել է ավագ դպրոցում, քանի որ այդ աստիճանում դպրոցականների ուսուցումը դառնում է ավելի ըմբռնելի, գիտակցական և նպատակային: Առաջին նպատակի լուծման համար առանձնացվեցին չափանիշներ, ախտորոշիչ նշաններ և նրանց համապատասխան ինքնակառավարման ունակությունների ձևավորման մակարդակներ: Որպես ավագ դպրոցականների ինքնակառավարման ցուցանիշներ այստեղ հանդես են գալիս նրանց ինքնավերլուծության, ինքնագնահատման, ինքնակախորշման, ինքնատղման, ինքնահսկողության, ինքնանպատակադրության և այլ կարողությունները:

Մենք առանձնացրել ենք նաև ախտորոշիչ հատկանիշներ, որոնք արտացոլում են աշակերտի կարողությունների իրականացման ինքնուրույնության աստիճանը և համապատասխանում են նրանց ձևավորման մակարդակին: Ընտրված չափանիշի և առանձնացված հատկանիշների հիման վրա մեր կողմից մշակվել են այդ մակարդակների բովանդակությունը յուրաքանչյուր ցուցանիշի նկատմամբ (էջ 95-98): Այս հարցի ամենալայն շրջանում պետք է նշել նաև Վ. Պ. Բեսսակոյի մարդկային գործունեության վերաբերյալ մեթոդիկան տրված յուրացման հաջողական մակարդակների տեսքով:

1-ին մակարդակ - աշակերտական՝ որը նշանակում է, որ իրավիճակին համապատասխան աշակերտի խնդիրը կայանում է արդեն իրեն հայտնի գիտելիքների և կարողությունների ճանաչման և դրանց վերարտադրման մեջ:

2-րդ մակարդակ - տիպային, նախատեսում է նպատակ և իրավիճակ, որտեղ աշակերտից պահանջում է օգտագործել իր իմացած գործողություններն ըստ ալգորիթմի:

3-րդ մակարդակ - արդյունավետ, էվրիստիկական, այս դեպքում աշակերտը պետք է ճշտի իրավիճակը և կողմնորոշիչ հիմք կառուցի իր գործունեության համար:

4-րդ մակարդակ - ստեղծագործական, սովորողներն ունեն ընդհանուր տեղեկություններ նպատակի մասին և իրենք են որոնում իրավիճակն ու գործողությունները:

Մեր հետազոտության սկզբում, օրինակ, պարզ դարձավ, որ ավագ դպրոցականների գլխավոր հիմնախնդիրներից մեկն ուսումնական նյութը ճշգրիտ, համառոտ, տրամաբանորեն շարադրելու անկարողությունն է: Դպրոցականների հետ անցկացրած փորձարարական գրույցի արդյունքը եղավ ընդհանուր ջանքերով կազմված աղյուսակը, որում համադրվել են ուսուցման ավանդական եղանակն և աշակերտների առաջադրած եղանակը, որը ներկայացված է աղյուսակ 1-ում:

	Ուսուցման առաջին եղանակը	Ուսուցման երկրորդ եղանակը
Ուսուցման նպատակը	Գիտելիքների համակարգի ձևավորելը	Սովորել յուրացնել ու կիրառել գիտելիքները
Ուսուցչի խնդիրը	Տալ գիտելիքներ, սովորեցնել դրանք իմաստավորել	Պայմաններ ստեղծել գիտելիքների որոնման, իմաստավորման ու կիրառման համար
Աշակերտի խնդիրը	Չեռք բերել գիտելիքներ, ցույց տալ դրանց առկայությունը	Սովորել յուրացնել, իմաստավորել և կիրառել գիտելիքները իրենց նպատակներին համապատասխան
Արդյունքը	Ուսուցչի նշանակած գնահատականը	Գնահատականով և ինքնագնահատմամբ արտահայտված ուսուցվածության մակարդակը

Այսպիսով, սովորողները ստացան իրենց համար նոր ուսուցման նպատակներ և մեթոդներ, ինչպես նաև ուսուցչի և աշակերտի նոր դերեր ուսումնական գործընթացում: Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, նրանք ոչ միայն ընդունեցին ի գիտություն ստացված տեղեկատվությունը, այլև դրսևորեցին նախաձեռնություն իրենց նպատակների իրականացման գործում: Աշակերտների կրթական նոր պահանջների հաշվառումը, մանկավարժական գործընթացում յուրաքանչյուր ուսումնական թեմայի տեղն ու դերը տեսնելը աշակերտներին հնարավորություն տվեց ակտիվորեն մասնակցել ուսումնական նյութի յուրացման եղանակների ընտրությանը (աշակերտների կրթական պահանջ): Այս փորձի արդյունքում 20 սովորողից 8-ը մշակեց իր տարբերակը: Փորձարարական ճանապարհով վերոհիշյալ երևույթը պարզաբանելու համար մենք 120 ավագ դպրոցականների հետ անց ենք կացրել նաև անկետային հարցումներ:

Աշակերտների կրթական պահանջմունքների արգասավորությունն այն է, որ նրանք կարիք են ունեցել ոչ թե լրացուցիչ, որոշակի իմացության (դա սովորական իրավիճակ է դպրոցում), այլ ավելի բարձր կարգի պատմական գործընթացի փիլիսոփայական իմաստավորման: Այդ համակարգը մեզ ստիպեց վերանայել ուսումնական նյութի հաղորդման ձևը, մակածական (խնդրակազմ) մեթոդից անցնել արտածման (դեդուկտիվ) մեթոդին: Յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրումը սկսվեց պատմագրական ակնարկից և արմատական հիմնախնդիրների առաջադրումից: Փորձարարական աշխատանքների 2-րդ փուլում, մենք դիտարկել ենք դպրոցական պրակտիկայում ուսուցչի և աշակերտի կառավարչական գործունեության վիճակը: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսուցչի ուշադրությունն իր գործունեության նկատմամբ շատ քիչ է կախված դասավանդվող առարկայից և այսօր շատ քիչ ուսուցիչներ են նպատակաուղղված զբաղվում դասի ընթացքում աշակերտի գործունեության կատարելագործման հարցերով: Ժամանակակից ուսուցչին առաջին հերթին իրեն պետք զգա որպես որոշակի առարկա դասավանդող, գիտելիքների կրող, և այս համոզմունքն էլ

կատիպի նրան բարեփոխել կրթության բովանդակությունը, ավելի հաճախ անցնելով դեպի ընդարձակման (էքստենսիվ) սկզբունքին կամ դա անել այլ առարկաների հետ ինտեգրացման ճանապարհով: Երկրորդ, անկախ ուսուցչի ազատությանը կրթական ծրագրերի ձևերի և մեթոդների ընտրության մեջ, նրա գործունեության գնահատման գլխավոր չափանիշը մնում է աշակերտների կրթվածության մակարդակը: Ռեսուրսային մեթոդների, ձևերի ու միջոցների ճիշտ ընտրության մասին պետք է դատել վերջնական արդյունքով, ուսուցման նպատակին հասնելու համար աշակերտների և հենց իր՝ ուսուցչի ժամանակի արդյունավետ գործադրումով: Այս իմաստով անհրաժեշտ է, որ ավագ դպրոցականները սովորեն գիտակցաբար ընտրել այն միջոցները, հնարներն ու մեթոդները, որոնք կապահովեն ուժերի նվազագույն գործադրման պայմաններում ավելի մեծ և առավել կայուն արդյունք տալը: Այս ուսումնասիրությունների ընթացքում՝ մենք փորձել ենք ի մի բերել ստեղծագործող ուսուցիչների կողմից իրացվող կառավարման բոլոր գործողությունների տվյալները՝ ըստ կրթական բնագավառների: Փորձարարական այս աշխատանքների ընթացքում մեր կողմից դիտարկվել է նաև դպրոցական պրակտիկայում ուսուցչի դերը: Այդ փորձի ընթացքում մենք օգտագործվել է Պ. Ի. Տրետյակովի մեթոդիկան, ըստ որի կառավարչական գործողությունները միավորվում են 3 բաժնում գնահատման 3 բալանոց սանդղակում:

Ըստ այդ հավաքական աղյուսակի արել ենք հետևյալ եզրակացությունները, օրինակ, որ ուսուցիչները առավել արդյունավետորեն են իրականացնում կառավարման կազմակերպական-կատարողական գործառնությունը: Դա բացատրվում է նրանով, որ մանկավարժության և տեսության, և՛ պրակտիկայի մեջ դասի կազմակերպական կողմին մեծ ուշադրություն է հատկացվել: Մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը ևս նպաստում է դասի կազմակերպչական կողմի կատարելագործմանը: Մեր դիտարկումները ցույց տվեցին ուսուցչի և աշակերտի կառավարչական մակարդակների միջև առկա չափի կախվածությունը: Որքան բարձր է ուսուցչի կառավարման գործառնության մակարդակը, այնքան աշակերտները ավելի լավ են կատարում իրենց՝ իհարկե մեկ մակարդակով ցածր: Ռեսուրսները նվազեցնում են աշակերտի ակտիվությունը այն դեպքում, երբ քիչ թվով աշակերտների են մասնակից դարձնում դասին, շատ քիչ են դիմում դասարանին՝ ամբողջ ծանրությունը վերցնելով իրենց վրա: Ակտիվությանը և հատկապես աշակերտների ինքնուրույնությունն ու ինքնավստահությունը հարվածում են այն ուսուցիչները, որոնք հաճախակի են միջամտում դաս պատասխանող աշակերտներին, նրանց փոխարեն իրենք են պատասխանում, լրացնում աշակերտի մտքերը, հուշող հարցեր առաջադրում՝ չսպասելով, որ աշակերտն ինքը մտածի ու արտահայտի իր մտքերը, նկատի և ուղղի իր սխալը, կամ դա կկատարեն մյուս աշակերտները: Այս դեպքում աշակերտները կորցնում են իրենց ուժերի նկատմամբ ունեցած վստահությունը, դառնում են կասկածամիտ և անվստահ իրենց գիտելիքների նկատմամբ: Իհարկե ուսուցիչը պետք է միջամտի, բայց դա պետք է լինի չափավոր և տեղին՝ աշակերտի մտքին ճիշտ ուղղություն տալու համար, որպեսզի այդ միջամտությունը չարգելակեն նրա ինքնուրույն մտածողությունը: Ակտիվության զարգացման շնորհիվ աշակերտների մեջ մշակվում են ինքնուրույն աշխատանքի

հմտությունները, որոնք կարևոր են ինչպես ինքնակառավարման, այնպես էլ հետագա գործունեության համար:

Մեր հետազոտության համար նկատելի էր նաև այս գործընթացում ուսուցիչների առաջավոր մանկավարժական փորձի միասնական-տեղեկատվական կենտրոնի բացակայությունը, ուստի, մենք ինքնուրույն նախաձեռնեցինք մի շարք դպրոցներում որոնել մեզ հետաքրքրող հարցերի պատասխանները: Նշենք նաև, որ վերոհիշյալ կենտրոնի բացակայությունը հանգեցնում է նրան, որ դպրոցում իրականացվող բարեփոխումները չեն կրում հիմնական բնույթ, որ նոր տերմինաբանության տակ երբեմն թաքնվում է նախորդի բովանդակությունը:

Ուսման գործընթացի կատարելագործումը և դրա արդյունքները տեսանելի չեն անմիջապես, սակայն, որտեղ հասել են կրթական և կառավարչական տեխնոլոգիաների ներդաշնակության, դպրոցն անցնում է որակական նոր վիճակի: Նորամուծության այս գործընթացների խորացումները հանգեցնում են կառավարչական համակարգերի ստեղծմանը ոչ միայն կառավարման, այլև ինքնակառավարման կարողությունների ուսուցման տիպային մակարդակով:

Ավագ դպրոցականների ինքնակառավարման կարողությունների ձևավորումը պարզաբանելու համար մենք մշակել և փորձարկել ենք հետևյալ մեթոդիկան, որը ենթադրում է տրամաբանորեն իրար հետ կապված մի շարք գործողությունների իրականացումը: Դրանք կրում են թեստային բնույթ և ներկայացված են աշխատանքի 86-92 էջերում:

Այս գլխի երկրորդ և երրորդ մասնագլուխները ևս նվիրված են ավագ դպրոցականների ինքնակառավարման փորձարարական հարցերին և դրանց արդյունքների վերլուծությանը: Այս ուղղությամբ մեր փորձարարական աշխատանքը կազմակերպվել է ավագ դասարաններում, քանի որ այդ աստիճանում ուսուցումը դառնում է ավելի ընթացիկ և նպատակային: Փորձարարական խումբը կազմված է եղել թիվ 43 դպրոցի 80 ավագ դպրոցականներից, իսկ ստուգողական խումբը՝ թիվ 63 դպրոցի 80 աշակերտներից: Ընտրությունը պայմանավորված էր նաև այդ դասարանների ուսուցիչների մեթոդական լավ պատրաստվածությամբ: Այս ամենի տեսական վերլուծությունը և մանկավարժական պրակտիկայի հետազոտությունը բացահայտեցին ավագ դպրոցականների ինքնակառավարման կարողությունների մակարդակների ամբողջական պատկերը (բոլոր սովորողներով և բոլոր ցուցանիշներով): Ինքնակառավարման մակարդակների այդ վերլուծությունը ցույց է տալիս, որ սովորողների մեծ մասը ինչպես փորձարարական, այնպես էլ ստուգողական խմբերում, իրականացնում են իրենց ինքնակառավարման կարողությունները՝ առաջնային յուրացման մակարդակով: Ըստ այդ մակարդակի լրացվում են 7 թեստեր, որոնցից հատկապես կարևոր են ճանաչման, տարբերակման և դասակարգման թեստերը:

Ինքնակառավարման կարևոր պայման է հանդիսանում անհատական մոտեցումը, ըստ որի սովորողներին պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբերի: 1-ին խմբի սովորողները նրանք են, ովքեր ընկալում են իրենց ուսումը որպես անհրաժեշտություն և պարտականություն, գիտակցելով, որ այն պետք է հետագայում: 2-րդ խմբի սովորողները բարեխիղճ են ուսման նկատմամբ և

կատարում են որոշ գործողություններ արդյունավետ (2-3) մակարդակների վրա: 3-րդ խմբի սովորողները տարբերվում են իրենց ակտիվությամբ և պատասխանատվությամբ ինչպես ուսման մեջ, այնպես էլ արտաուսումնական աշխատանքներում: Նրանք լավ են սովորում, ընտրողական վերաբերմունք են ցուցաբերում առարկաների նկատմամբ և ձգտում ունեն շարունակելու ուսումը բարձրագույն հաստատություններում:

Վերոհիշյալ հետազոտական արդյունքները, որ ստացել ենք փորձի արդյունքում թույլ են տալիս կատարել եզրակացություններ այն մասին, որ սովորողների մոտ ամենից դժվար ձևավորվում են ինքնավերլուծության և ինքնաստուգման կարողությունները, ավելի հեշտ՝ ինքնակազմակերպմանը:

2.3 Ելնելով դրված նպատակներից՝ ատենախոսության երրորդ մասնազվեսում կատարել ենք այս փորձարարական աշխատանքների վերլուծություն, ներկայացրել ենք փորձարարական և ստուգողական խմբերում՝ կառավարման կարողությունների դինամիկայի փոփոխությունները, աղյուսակային-պատկերային բացատրությունները: Ըստ այդ աղյուսակների այդ երկու խմբերում էլ տեղի է ունենում ինքնակառավարման կարողությունների ձևավորում: Առավել ակտիվ աշակերտների մոտ ձևավորվում են ինքնակառավարողական և ինքնագնահատման ունակություններ: Արդյունքի տվյալները նաև ցույց են տալիս, որ այդ կարողությունների ձևավորումը փորձարարական խմբում ավելի ինտենսիվ է, քան ստուգողական խմբում:

Մեր այս փորձի երկրորդ նպատակը ինքնակողմնորոշման կարողությունների որակի բացահայտումն է, որը իրականացվում է մինևույն թեստային մեթոդիկայով, երբ աշակերտին առաջարկվում է 7 թեստերից (յուրաքանչյուրը 10 գործողություն) կազմված մարտկոց: Առավել որակով ստացվում են 1-ին և 2-րդ մակարդակները: Առավել դժվար յուրացվում է 3-րդ մակարդակը:

Փորձնական 3-րդ մակարդակը կայանում է փորձի արդյունքների վերջնական գնահատման թվական ցուցանիշներով: Այդ ցուցանիշներից ի հայտ է գալիս, որ կառավարման բոլոր կարողությունների գնահատումը փորձարարական խմբերում ավելի բարձր է, քան ստուգողական խմբերում:

Փորձարարական աշխատանքները հաստատեցին այն վարկածը, համաձայն որի անձնակողմնորոշիչ ուսուցման պայմաններում ավագ դպրոցականներն առավել արագ և որակով են յուրացնում սեփական ուսումնական գործընթացի կառավարման ունակությունները, որոնք ձեռք են բերում գիտակցական ճանաչողական բնույթ:

Եզրակացություններ

1. Ուսման գործընթացը իրենից ներկայացնում է ուսումնական գործունեության ձևավորման և ինացության օրգանական ամբողջություն, որն աստիճանաբար դառնում է աշակերտի կենսագործունեության բնական ձևը, եթե, իհարկե, այն միշտ ելակետ է ընդունում նրա ստեղծագործական ներուժը:

2. Ուսուցումն աշակերտի համար անձնական նշանակության գործունեություն է, նրա կենսագործունեության բնական ձևը, որի ընթացքում դպրոցականը ձեռք է բերում ոչ միայն գիտելիքներ և դրանց կիրառման կարողություններ, միջոցներ, այլև սոցիալական հարաբերությունների և դրանց կիրառման չափանիշներ:

3. Ուսուցման գործընթացի առաջնային ինքնակառավարումը՝ կատարվող գործունեությունն իրենից տարբերակող աշակերտի ընդունակությունն է և իր դերի գիտակցումը դրա մեջ: Այնուհետև ինքնակառավարումը զարգանում է որպես կառավարչական գործունեության հատուկ տեսակ, որտեղ կառավարման սուբյեկտը աշակերտն է, օբյեկտը՝ նրա ուսուցման գործընթացը: Աշակերտական ինքնակառավարումը ընդունակության վրա հիմնված իմացաբանական գործունեություն է պայմանավորված սոցիումի պահանջունքներով, որի արդյունքը դառնում է նրա անձնական որակը, զարգացման նախապայմանը:

4. Անձնակողմնորոշիչ ուսուցումը դպրոցականի սուբյեկտիվության զարգացման համար մանկավարժական պայմանների մեթոդաբանությունն է, որը կոնկրետացնում է դրանք ուսուցման ընթացքում: Աշակերտն ուսուցման կառավարումն իրականացնում է հասարակական միջավայրում, ուստի նրա գործունեությունը կապված է ուսման պրոցեսի մյուս մասնակիցների հետ: Նրանցից յուրաքանչյուրն այդ ընթացքում հանդիսանում է սուբյեկտ: Հետևաբար, ուսուցիչը պահանջվում է սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերությունների այնպիսի կազմակերպում, որը կնպաստի աշակերտի ինքնակառավարման արդյունավետությանը: Ինքնակառավարման այս համալիր կարողությունների դրսևորման միջոցով մեծանում է դպրոցականի ինքնուրույնության բաժինն այդ գործընթացում:

5. Դպրոցականների ինքնակառավարումն ընթանում է աստիճանաբար, նրա ուսումնական գործունեության ձևավորմանը համաչափ: Աշակերտի ներգրավումը ինքնակառավարման այս հարցերի կատարելագործման մեջ առավել հարմար է (сензитивен) ավագ դպրոցական հասակին:

6. Փորձարարական աշխատանքները ցույց տվեցին, որ մասսայական դպրոցական պրակտիկայում լիովին չի իրացվում աշակերտի հնարավորություններն ինքնուրույն կառավարելու սեփական ուսուցումը: Առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսուցիչների մեծ մասն ուսուցման գործընթացում նպատակաուղղված կերպով չի զբաղվում դպրոցականների ինքնակառավարման ունակությունների զարգացմամբ, որի գլխավոր պատճառն ուսուցիչների թերի, ոչ լրիվ գիտելիքներն են դպրոցական պրակտիկայում անձնակողմնորոշիչ ուսուցման իրականացման ուղիների մասին:

7. Ձևավորող փորձը ցույց տվեց, որ ավագ դպրոցականների ինքնակառավարումն ավելի արդյունավետ է իրականանում հետազոտությունների ընթացքում բացահայտված մանկավարժական պայմանների առկայության դեպքում (սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերություններ, սուբյեկտ-օբյեկտային հարաբերություններ, ուսուցման գործընթացում դպրոցականների մոտ ինքնակառավարման կարողությունների նպատակաուղղված ձևավորում) և ինքնակառավարման կարողությունների ձևավորման առաջարկված մեթոդիկայի օգտագործման պայմաններում:

Ատենախոսության թեմայով լույս են ընծայվել հետևյալ հոդվածները.

1. Արվյան Ռոստոմ «Ուսուցչի գործունեությունը ուսուցման գործընթացում դպրոցականների ինքնակառավարման զարգացման պայմանների ստեղծման ուղղությամբ», «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2, (19), «Ատողիկ» հրատարակչություն, Երևան, 2004թ., էջ 223-228:

2. Արվյան Ռոստոմ Գործունային մոտեցման գաղափարների արտահայտումը ուսուցման գործընթացում, «Մանկավարժական միտք» հանդես, Երևան, 2004թ., N3-4, էջ 51-54:

3. Արվյան Ռոստոմ «Արտաուսումնական աշխատանքների կազմակերպման սկզբունքներն ու դրանց կիրառման ժամանակակից առանձնահատկությունները», «Մանկավարժական միտք» հանդես, Երևան, 2004թ., N1-2, էջ 76-82:

4. Արվյան Ռոստոմ «Ավագ դպրոցականների ինքնակառավարման միջոցները ուսուցման գործընթացում», գիտական հոդվածաշար III Մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիա, Երևան 2004թ., էջ 155-161:

Абовян Ростом Суменович

Развитие способностей самоуправления старшекласников в педагогическом процессе

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 "Теория и история педагогики"

Защита диссертации состоится 15-ого июня 2006г. в 14⁰⁰ час. на заседании спец. совета 020 по присуждению ученых степеней при Арм. пед. гос. университете им. Х. Абовяна. Адрес: 375010, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Цель исследования:

- Разработать основные методы и принципы порядка рассмотрения способностей самоуправления школьников в учебном процессе и обосновать педагогические условия их развития в дидактическом процессе.
- Выявить те педагогические условия, которые обеспечивают развитие управления процессом обучения, а также разработать методику оформления способностей самоуправления.
- Провести социально-психологический анализ самоуправления школьников с точки зрения нового педагогического опыта.
- Новизна исследования – впервые исследована проблема

самоуправления старшекласников и разработаны целостные подходы к эффективной реализации учебно-воспитательных задач.

• Теоретическое и практическое значение. Результаты исследования могут служить основой специальных курсов педагогических дисциплин, а разработанные методические подходы и рекомендации способствуют выявлению и развитию самоуправленческих качеств и способностей старшекласников.

• Апробация исследования проводилась на научных конференциях АГПУ, а внедрение результатов - в старших классах школ № 29, 43, 63 г. Еревана.

Диссертация состоит из введения, двух глав, заключения, а также списка литературы. Общий объем работы – 145 стр.

Во введении обоснована актуальность темы, определены объект, предмет, цель, гипотеза и задачи, методы исследования, раскрыта научная новизна, теоретическая и практическая значимость работы и изложены основные положения, выносимые на защиту. В сжатом виде представлены результаты научного эксперимента, его анализ, даны выводы и рекомендации.

В первой главе проводится историко-философский и психологический анализ вопроса, учебный процесс, исходя из темы, рассматривается как объект управления ученика.

Основываясь на традиционной и современной педагогической литературе, данных исследований и на опыте передовых учителей республики, мы изучили вопрос самоуправления старшекласников и с теоретической, и с практической стороны. В процессе рассмотрения вопроса нами были использованы данные исследований, проведенных в последние годы и касающиеся вопросов самоуправления. В работе использована литература на армянском, русском и иностранных языках.

Во второй главе определяется понятие "управления" процессом обучения со стороны школьников и деятельность учителя по направлению создания условий для самоуправления. Особое место отведено анализу тех методов, внедрение которых полезно с точки зрения выдвинутых вопросов.

По теме диссертации опубликовано четыре научных статьи.

05.02.2013

ՀՀ Ազգային գրադարան



ԱՆ 4300155

